ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԱԾՔ • ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՁԱՅՆ • ՄԵԿ ԾՐԱԳԻՐ

Համայնքի մասնակցությամբ կառուցված ծրագիր

Pasadena Unified-ը թարմացնում է իր դպրոցական տարածքների գլխավոր ծրագիրը՝ երկարաժամկետ փաստաթուղթը, որն ուղղորդում է, թե ինչպես է շրջանը ներդրումներ կատարում իր դպրոցական տարածքներում: Մեր դպրոցներում սովորող, դասավանդող և աշխատող մարդիկ օգնում են ձևավորել այդ ծրագիրը: **RSSC**-ն համայնքի ներգրավման գործընթացը ղեկավարում է շրջանի շինությունների թիմի և բարգր ղեկավարության հետ միասին:

ԳԼԽԱՎՈՐ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԿՐԹԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ՝ Մայիսի 27, 2027

ինչու ենք այստեղ

Այս թարմացումն հիմնվում է վերջերս մշակված գլխավոր ծրագրի վրա, ուստի նպատակը տեսլականը նորից սկսելը չէ, այլ դրա հետ համապատասխանեցումն ավելի հստակ դարձնելը: Կրթական առաջնահերթություններն արդեն իսկ սահմանված են: Մինչ այժմ բացակայում էր հստակ կապն համայնքի առաջնահերթությունների և աշխատանքների ծավալի, փուլավորման, արժեքների և ֆինանսավորման միջև: Այս աշխատանքը լրացնում է այդ բացը:

ինչպես է աշխատում ծրագիրը

Ծրագրավորումը նախորդում է նախագծմանը. նախ լուծվում է խնդիրը, ապա նախագծային լուծումները հետևում են դրան: Ծրագրավորումն ուղղված է առկա ռեսուրսների լավագույնս օգտագործելու աշխատանքներին: Դասակարգման փոխարեն, թե որ նախագծերն են «լավագույնը», գործընթացը պատասխանում է ավելի օգտակար հարցի՝ ներկայիս սահմանափակումների պայմաններում ո՞ր ուղին է առավել արդյունավետ առաջ տանում մեր առաջնահերթությունները:

հինգ փուլ՝ մեկ ուղի

ակնարկ

1	ՍԿՍԵԼ ՄԱՐԴԿԱՆՑԻՑ	2026-Ի ԱՊՐԻԼԻՑ ՕԳՈՍՏՈՍ
2	ՀԱՍԿԱՆԱԼ ՆԵՐԿԱՆ	2026-Ի ՄԱՅԻՍԻՑ ՀՈԿՏԵՄԲԵՐ
3	ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼ ԱՊԱԳԱՆ	2026-Ի ՍԵՊՏԵՄԲԵՐԻՑ ԴԵԿՏԵՄԲԵՐ
4	ԱՊԱԳԱՅԻ ՁԵՒԱՎՈՐՈՒՄ	2026-Ի ՆՈՅԵՄԲԵՐԻՑ 2027-Ի ՀՈՒՆՎԱՐ
5	ԸՆՏՐԵԼ ՈՒՂԻՆ	2027-Ի ՀՈՒՆՎԱՐԻՑ ՄԱՅԻՍ

արդարությունը՝ կենտրոնում

Այս ծրագիրը գնահատվելու է ոչ միայն ընդունված որոշումներով, այլ նաև նրանով, թե արդյոք համայնքները գործընթացը կզգան որպես թախանցիկ, ներառական և վստահության արժանի: Դրա համար անհրաժեշտ է նպատակային աշխատանք այն համայնքների հետ, որոնք նախկինում դուրս են մնացել, թերի են ներկայացված եղել կամ կտրված են եղել շրջանի որոշումների կայացման գործընթացից: Յուրաքանչյուր ներգրավման արդյունք հրապարակվում է և յուրաքանչյուր հաշվետվություն տարածվում է ամբողջ դպրոցական շրջանի մակարդակով:

ինչ է ձեզ վերադառնում

ՎԱՂ **SFAC-ի նախնական դիտարկումներ՝ հունիսի 2-ին,** Մեդիսոն, Էլիոթ և Սան Ռաֆայել դպրոցների Համայնքային առաջնահերթությունների միջանկյալ ամփոփումներ՝ 2026թ. հունիսի 15:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 1 Համայնքի առաջնահերթությունների հաշվետվություն՝ 2026թ. հոկտեմբերի 19:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2 Պայմաններ հաջողության և բարձր ազդեցության համար՝ 2026թ. նոյեմբերի 17:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 3 Առաջնահերթությունների համապատասխանեցումը նախագծին՝ 2027թ. մարտի 15:

ինչ է հաջորդիվ այս փաստաթղթում

Ներգրավման ժամանակացույցը՝ էջեր 2-4: Վերոհիշյալ հինգ փուլերի բոլոր հանդիպումներն՝ ամսաթվերով, ժամերով և ձևաչափերով:

«Պարզ պատմություն»՝ էջեր 5-6. Ինչպես է աշխատանքը կատարվում այս հինգ փուլերի ներսում՝ տասներկու քայլով:



Ժամանակացույց

ՀԱՄԱՅՆՔԻ ԵՒ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ • SFAC ԵՒ ԿՐԹԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ • ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՄԱՅՆՔԻՆ

Ստորև նշված յուրաքանչյուր ներգրավում մեկ միասնական գործընթացի մաս է: Ամսաթվերն ու ժամերը արդիական են 2026թ.-ի օգոստոսի 1-ի դրությամբ, իսկ մի քանի հանդիպումներ դեռ համաձայնեցվում են շրջանի օրացույցի հետ: Ստորև ներկայացված հինգ փուլերը նույն հինգ փուլերն են, որոնք օգտագործվում են «Պարզ պատմության» բաժնում:

1 ՍԿՍԵԼ ՄԱՐԴԿԱՆՑԻՑ

2026-Ի ԱՊՐԻԼԻՑ ՕԳՈՍՏՈՍ

Շրջանն ու պլանավորման թիմը հենց սկզբից պարտավորվում են իրական ազդեցություն ունենալ այն մարդկանց կյանքի վրա, ովքեր ապրելու են այդ արդյունքներով, և աշխատանքը սկսում են հարաբերությունների կառուցումից: Սա հիմք է ստեղծում հաջորդ բոլոր քայլերի համար:

ԱՊՐԻԼԻ 2, 2026

SFAC 01: Մեկնարկային և ծրագրային սկզբունքներ

ԵՐԵԿՈՅԱՆ 5-ԻՑ 7-Ը • ZOOM

Շրջանի կրթական ղեկավարի՝ շինությունների խորհրդատվական հանձնաժողովի անդամները սահմանում են այն սկզբունքները, որոնք ուղղորդելու են մնացած գործընթացը՝ ներառյալ՝ արդյունքների հետ ապրող մարդկանց իրական ազդեցություն տալու պարտավորությունը: Այդ պարտավորությունն է ձևավորում, թե ովքեր են մասնակցում և ինչ գիտելիք է համարվում արժեքավոր:

ԱՊՐԻԼԻ 21, 2026

Բարձրագույն ղեկավարության թիմի հանդիպում

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՒ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԹԻՄ

Աշխատանքային հանդիպում՝ 2023թ.-ի ծրագրի և **RSSC**-ի համայնքային ներգրավման մոտեցումը դրան համապատասխանեցնելու վերաբերյալ: Ծրագրման թիմը սկսում է հարաբերություններից՝ նախքան ծրագրերին անցնելը:

ՄԱՅԻՍԻ 13-ԻՑ 22-Ը, 2026

Կրթական խորհրդի անդամների անհատական հարցազրույցներ

ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐԸ՝ 1.5 ԺԱՄ • ZOOM

Խորհրդի ներհայացքը գործընթացի մեջ է մտնում սկզբից: Յուրաքանչյուր զրույց ընդգրկում է առաջնահերթությունները, թե ինչպիսին է հաջողությունը այդ հոգաբարձուի տեսանկյունից և ցանկացած մտահոգություն: Համայնքը ճանաչող մարդիկ բացահայտում են դրա պատմությունը, ուժեղ կողմերը, մտահոգությունները և ուրիշներին հասցնելու վստահելի եղանակները:

ՀՈՒՆԻՍԻ 2, 2026

SFAC Insights Report: տարածքների ծրագրավորման պարտավորություններ՝ հավասարության վրա հիմնված

SFAC 01 աշխատաժողովի արդյունքը լայնորեն տարածվում են PUSD համայնքում:

ՀՈՒՆԻՍԻՍ 25 ԵՒ ՀՈՒԼԻՍԻ 1, 2026

Հարցազրույցներ Դոկտոր Հիլլի և Դոկտոր Ռեյնոսոյի հետ

Կրթական տեսլականի և 2023 թվականի կրթական գլխավոր ծրագրի և շրջանի կրթական պահանջների վերաբերյալ ավելի խորը բացատրություն:

ՕԳՈՍՏՈՍԻՍ 3-ԻՑ 6-Ը, 2026

Հինգ փոքր խմբերի մասնագետների հետ հարցազրույցներ

ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐԸ՝ 1.5 ԺԱՄ • ZOOM

Ուսանողների աջակցության ծառայություններ, հոգեկան առողջություն և բարեկեցություն, անգլերեն սովորողներ, հատուկ կրթություն և յուրաքանչյուր խմբում՝ համապատասխան մասնակցով: Ավելի լավ հարաբերությունները բերում են ավելի լավ հարցերի, իսկ ավելի լավ հարցերը՝ ավելի խոր լսելու հնարավորության:

2 ՀԱՍԿԱՆԱԼ ՆԵՐԿԱՆ

2026-Ի ՄԱՅԻՍԻՑ ՀՈԿՏԵՄԲԵՐ

Աշակերտները, ընտանիքները, մանկավարժները, աշխատակիցներն ու գործընկերները կիսվում են իրական փորձառություններով և ոչ ոք պարտավոր չէ իր կյանքը մասնագիտական լեզվով ձևակերպել, որպեսզի իր գիտելիքը արժեք ունենա: Բազմաթիվ փորձառություններ միավորվում են որպես «Ներկա կրթական միջավայր», մինչդեռ կարևոր տարբերությունները մնում են տեսանելի:

ՄԱՅԻՍԻ 26-ԻՑ 27-Ը, ԵՒ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 9, 10, 11, 16, 17, 18, 23, 24, 25, 2026Թ.-Ի

SSC Աշխատաժողով 01: տարածքների շրջայցեր և լսման հանդիպումներ

ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԴՊՐՈՑՈՒՄ՝ 2 ԺԱՄ, ԱՌԱՎՈՏՅԱՆ 8:00-ԻՑ ԵՐԵԿՈՅԱՆ 5:30:

Դպրոցական տարածքի հանձնաժողովի անդամները շրջում են իրենց դպրոցում և նշում այն պայմանները որոնք, անհրաժեշտ են աշակերտների, աշխատակիցների և ընտանիքների հաջողության համար: Ոչ ոք պարտավոր չէ իր, փորձը մասնագիտական լեզվով ներկայացնել որպեսզի այն հաշվի առնվի: Հանձնաժողովներում ներառված են դպրոցի ղեկավարությունը, ուսուցիչներ, մասնագետներ, օժանդակ անձնակազմ, աշակերտների աջակցության աշխատակիցներ, ծնողներ և խնամակալներ, ինչպես նաև աշակերտներ:

ՀՈՒՆԻՍԻՍ 15, 2026

Համայնքի առաջնահերթությունների միջանկյալ զեկույցներ

Մայիսի 26-ի և 27-ի լսումների արդյունքները Մեդիսոն, Էլիոթ և Սան Ռաֆայել դպրոցներում: Այդ նյութերը ներառելու են Հաշվետվություն 1-ում:

ՀՈՒՆԻՍԻՍ 15-ԻՑ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25-Ը, 2026

Դպրոցական համայնքի հարցում

ԲԱՑ Է ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՐ

Մասնակցության երկրորդ հնարավորություն նրանց համար, ովքեր չեն կարողացել ներկա լինել լսման հանդիպմանը: Հարցերը նույնն են ինչ SSC-ի հանդիպումների ժամանակ:

ՀՈՒԼԻՍԻՍ 28, 29 ԵՒ 30, 2026

«Վստահելի ձայների» հանդիպումներ՝ ընդհանուրը երեք

ԳԱՂՏՆԻ, ԱՆՀԱՏԱԿԱՆ

Հանդիպումներ համայնքային կազմակերպիչների, կարծիք ձևավորողների և տարբեր ցանցեր կապող մարդկանց հետ, այդ թվում՝ սևամորթ, գունավոր և Ալթադենայի համայնքային ցանցերում խոր արմատներ ունեցող մարդկանց: Յուրաքանչյուր զրույց կենտրոնանում է մեկ հարցի վրա՝ ինչը կդարձնի այս ներգրավումը վստահելի տվյալ համայնքի համար և ինչը անմիջապես կվնասի այդ վստահությանը:

ՕԳՈՍՏՈՍԻՍ 8-ԻՑ ՕԳՈՍՏՈՍԻՍ 20-Ը, 2026

Փոքր խմբերով լսումների հանդիպումներ՝ ընդհանուր ինը

8-12 ՄԱՍՆԱԿԻՑ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԽՄԲՈՒՄ

Խմբերը կազմվում են ինքնության և կենսափորձի հիման վրա՝ ներկայիս Էլիոթի ընտանիքներ, իսպանախոս ընտանիքներ, Փասադենայում և Ալթադենայում երկարատև արմատներ ունեցող սևամորթ ընտանիքներ, գունավոր ընտանիքներ, Էլիոթի աշակերտներ, շրջանավարտներ, վկայագրված մասնագիտական և օժանդակ աշխատակիցներ, արվեստի ղեկտի գործընկերներ, հրդեհների պատճառով տեղահանված ընտանիքներ և թաղամասերի բնակիչներ:

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 15, 2026

SFAC 02: Ընդհանուր առաջնահերթությունների աշխատաժողով

ԵՐԵԿՈՅԱՆ 5-ԻՑ 7-Ը • ZOOM

Բազմաթիվ փորձառություններ միավորվում են մինչ կարևոր տարբերությունները շարունակում են տեսանելի մնալ՝ լուծման ենթակա խնդիրներ պահպանման արժանի ուժեղ կողմեր և հետապնդման արժանի ձգտումներ: Դրանք, ձևավորում են Ներկա կրթական միջավայրը՝ տարածքների տվյալների վերանայման և շրջանային առաջնահերթությունների առաջին նախագծի հետ միասին:

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 19, 2026

Հաշվետվություն 1: Համայնքի առաջնահերթությունների հաշվետվություն

Վերոնշյալ բոլոր լսման գործընթացների արդյունքները, որոնք լայնորեն տարածվում են համայնքում: Այն ինչ PUSD-ում նախկինում կարող էր անձնական կամ մեկուսացված թվալ, տեսանելի է դառնում ավելի մեծ ամբողջության մեջ: Սա համայնքի ասածի հրապարակային արձանագրությունն է՝ նախքան որևէ նախագծային ցանկի կազմվելը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԵՒ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ · SFAC ԵՒ ԿՐԹԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ · ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՄԱՅՆՔԻՆ

3 ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼ ԱՊԱԳԱՆ

2026-Ի ՍԵՊՏԵՄԲԵՐԻՑ ԴԵԿՏԵՄԲԵՐ

Ընդհանուր պատկերը վերադառնում է համայնքին, և մարդիկ նշում են այն առաջնահերթությունները, որոնք ամենակարևորն են: Այդ առաջնահերթությունները դառնում են Հաջողության պայմաններ՝ նկարագրություն այն մասին, թե ինչ պետք է իրականություն դառնա, որպեսզի մարդիկ և ծրագրերը կարողանան հաջողել:

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 8, 2026

Հաջողության պայմաններ փորձնական աշխատաժողով՝ San Rafael ES-ում

ԵՐԵԿՈՅԱՆ՝ ԺԱՄԸ 5-ԻՑ 7-Ը • ՏԵՂՈՒՄ՝ ՄԻՆՉԵՒ 50 ՄԱՍՆԱԿԻՑ

Ընդհանուր պատկերը սկզբում վերադառնում է մեկ դպրոցական համայնք: Մարդիկ տեսնում են իրենց խոսքերը, ծանոթանում են իրենցից տարբեր փորձառությունների հետ և նշում ամենակարևոր առաջնահերթությունները, ապա ձևակերպում են այն պայմանները որոնք անհրաժեշտ են հաջողության համար: Արդյունքները նաև տվյալներ են փոխանցում Design Build Competition-ին:

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 27, 28, 29 ԵՒ ՆՈՅԵՄԲԵՐԻ 4, 10, 12, 2026

Հաջողության պայմանների աշխատաժողովներ՝ բոլոր դպրոցական տարածքների համար

ՎԵՑ ԵՐԵԿՈ • ԵՐԵԿՈՅԱՆ 6-ԻՑ 8-Ը. ՏԵՂՈՒՄ

Բաց է ամբողջ PUSD դպրոցական համայնքի համար՝ յուրաքանչյուր հանդիպմանը մինչև 50 մասնակից: Մասնակիցները առաջնահերթությունները կարիքներն ու արժեքները վերածում են Հաջողության պայմանների նկարագրության, թե ինչ պետք է իրականություն դառնա մարդկանց և ծրագրերի հաջողության համար: Դպրոցների խմբավորումները ամփոփվում են տարածքների թիմի և բարձրագոյն ղեկավարության հետ:

ՆՈՅԵՄԲԵՐԻ 5, 2026 • ՆԱԽՆԱԿԱՆ

Կրթական խորհրդի աշխատաժողով

ԵՐԵԿՈՅԱՆ 5-ԻՑ 8-Ը • ՏԵՂՈՒՄ

Հատուկ հանդիպում, որի ընթացքում ծրագրերի թիմը ներկայացնում է տվյալները, լսում է խորհրդի կարծիքը և բարձրագոյն ղեկավարության հետ միասին պատասխանում հարցերին:

ՆՈՅԵՄԲԵՐԻ 17, 2026

Հաշվետվություն 2: Հաջողության պայմանների և բարձր ազդեցություն

Հաջողության պայմանների աշխատաժողովների և SFAC 03-ի նախագծային ռազմավարությունների աշխատանքի արդյունքը: Այս պայմանները դառնում են հաջորդ քայլերը ստեղծելու և գնահատելու կողմնացույցը և հիմք են ծառայում հայեցակարգային պլանների համար, որոնք նախագծվում են համայնքների հետ և նրանց մասնակցությամբ՝ ոչ թե պարզապես նրանց համար: Լայնորեն տարածվում է:

ՆՈՅԵՄԲԵՐԻ 18, 2026

SFAC 03: Նախագծային ռազմավարությունների աշխատաժողով

ԵՐԵԿՈՅԱՆ 5-ԻՑ 7-Ը • ZOOM

Շրջանային առաջնահերթությունները վերածվում են հիմնական նախագծային ռազմավարությունների, ապա հնարավոր դպրոցական նախագծերի կարճ ցանկը գնահատվում, ճշգրտվում և առաջնահերթացվում է:

ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-ԻՑ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 16-Ը, 2026

Հաջողության պայմանների աշխատաժողովի հարցում

ԲԱՑ Է ԲՈԼՈՐ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Մասնակիցները կարծիք են հայտնում աշխատաժողովների արդյունքների վերաբերյալ, որպեսզի եզրակացությունները ստուգվեն ոչ միայն սենյակում ներկա մարդկանց, այլ ավելի լայն համայնքի կողմից:

4 ԱՊԱԳԱՅԻ ՁԵՒԱՎՈՐՈՒՄ

2026-Ի ՆՈՅԵՄԲԵՐԻՑ 2027-Ի ՀՈՒՆՎԱՐ

Պլանավորողներն ու ճարտարապետները Հաջողության պայմանները համադրում են դպրոցական ծրագրերի, շինությունների կարիքների և ծախսերի հետ, ապա հնարավոր նախագծերը վերադարձնում են համայնքին, որպեսզի մարդիկ գնահատեն՝ արդյոք առաջարկները ճիշտ են արտացոլում իրենց ասածը:

ՆՈՅԵՄԲԵՐ 2026-ԻՑ ՀՈՒՆՎԱՐ 2027

Ծրագրման թիմի վերածման աշխատանք

ՈՉ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Ծրագրման մասնագետներն ու ճարտարապետները Հաջողության պայմանների շրջանակում համադրում են դպրոցական ծրագրերի, տարածքների կարիքների և ծախսերի հետ՝ ցույց տալով, թե յուրաքանչյուր հնարավոր նախագիծ ինչպես է համապատասխանում մարդկանց կողմից նշված առաջնահերթություններին: Մասնագիտական փորձագիտությունը ընդհանուր ուղղությանը տալիս է տեսանելի և գործնական ձև, իսկ արդյունքները վերադարձվում են դպրոցներին, ստորև նշված աշխատաժողովների ընթացքում:

ՆՈՅԵՄԲԵՐԻ 30 ԵՒ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1, 2, 3, 8, 9, 14, 15, 16, 2026

Դպրոցական համայնքի աշխատաժողովներ 02: հայեցակարգային գծապատկերներ

ԻՆԸ ԵՐԵԿՈ • ԵՐԵԿՈՅԱՆ 6-ԻՑ 8-Ը • ZOOM

Հնարավոր նախագծերը վերադառնում են յուրաքանչյուր դպրոցական համայնք: Մարդիկ Հաջողության պայմանների միջոցով գնահատում են՝ արդյոք առաջարկները ճիշտ են արտացոլում իրենց մտադրությունները, ապա ուղղում և ձևավորում են դրանք: 30 րոպե՝ ընդհանուր խմբով, ապա 90 րոպե՝ առանձին խմբերում և յուրաքանչյուր դպրոցական համայնք իր տարածքի համար ստանում է առանձին 90 րոպե:

ինչ է կատարվում ձեր ասածի հետ

- Այն գրանցվում է: Յուրաքանչյուր հանդիպում փաստագրվում է, իսկ թեմաները արտացոլվում են երեք հաշվետվություններում, որոնք վերադառնում են համայնքին:
- Այն փոխանցվում է հաջորդ փուլերին: Համայնքի առաջնահերթությունները մտնում են աշխատաժողովներ SFAC, որտեղ ձևավորում են նախագծային ռազմավարություններն ու նախագծերի ցանկը:
- Մենք հստակ ասում ենք, թե ինչն է բաց քննարկման համար: Եթե որևէ որոշում համայնքային ներգրավման սահմաններից դուրս է՝ մենք դա բաց ասում ենք՝ փոխանակ կարծիք խնդրելու մի հարցի շուրջ, որի վրա այդ կարծիքը չի կարող ազդել:

մեկ ուղի, հինգ փուլ

ԱՄԲՈՂՋ ԸՆԹԱՑՔԸ, 2026 Թ. ԱՊՐԻԼԻՑ 2027 Թ. ՄԱՅԻՍ

1	2	3	4	5
ՍԿՍԵԼ ՄԱՐԴԿԱՆՑԻՑ	ՀԱՍԿԱՆԱԼ ՆԵՐԿԱՆ	ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼ ԱՊԱԳԱՆ	ԱՊԱԳԱՅԻ ՁԵՒԱՎՈՐՈՒՄ	ԸՆՏՐԵԼ ՈՒՂԻՆ
2026 ապր., օգոս.	2026 մայ., հոկտ.	2026 սեպտ., դեկտ.	2026 նոյ., 2027 հունվ.	2027 հունվ., մայ.
		ԴՈՒՔ ԱՅՍՏԵՂ ԵՔ	ԴՈՒՔ ԱՅՍՏԵՂ ԵՔ	

ՀԱՄԱՅՆՔԻ ԵՒ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ • SFAC ԵՒ ԿՐԹԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ • ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՄԱՅՆՔԻՆ

5 ԸՆՏՐԵԼ ՈՒՂԻՆ

2027-Ի ՀՈՒՆՎԱՐԻՑ ՄԱՅԻՍ

Հստակ սցենարները ցույց են տալիս թե ինչ կարող է տեղի ունենալ, որտեղ, երբ և ինչ փոխզիջումներով: Մարդիկ գնահատում են տարբեր ուղիները՝ օգտագործելով այն ապագայի պատկերացումը, որը իրենք օգնել են ձևակերպել, իսկ այդ դատողությունների հիմնավորումը որպես հրապարակային արձանագրություն փոխանցվում է շրջանի ղեկավարներին և կրթական խորհրդին:

ՀՈՒՆՎԱՐ 13, 2027

SFAC 04: Նախագծի առաջնահերթություն, մաս 1

ԵՐԵԿՈՅԱՆ 5-ԻՑ 7-Ը • ZOOM

Ամբողջ դպրոցական համակարգի նախագծային պատկերի համատեղ իմաստավորում և առաջնահերթացման մեթոդաբանության ներկայացում: Հստակ սցենարները ցույց են տալիս թե ինչ կարող է տեղի ունենալ, որտեղ, երբ և ինչ փոխզիջումներով:

ՓԵՏՐՎԱՐԻ 3, 2027

SFAC 05: Նախագծի առաջնահերթություն, էջեր 2-4

ԵՐԵԿՈՅԱՆ 5-ԻՑ 7-Ը • ZOOM

Առաջնահերթացման գործիքը փորձարկվում է իրական ընտրությունների վրա՝ ինչում և որտեղ ներդրում կատարել: Երբ ֆինանսներն ու ժամանակը պարտադրում են դժվար ընտրություններ, հանձնաժողովը վերադառնում է սկզբում տրված պարտավորությանը և հարցնում՝ ում կարիքներն են ամենամեծը և ինչից չպետք է զրկված լինի որևէ համայնք:

ՓԵՏՐՎԱՐԻ 25-ԻՑ ՄԱՐՏԻ 7-Ը, 2027

Համայնքային հավաք 02 հարցում

Բոլոր նրանց համար ովքեր չեն մասնակցել հավաքին: Երկու հարց է առաջ բերվում՝ ինչն է ճիշտ արվել, և ինչը պետք է փոխվի:

ՄԱՐՏԻ 2, 3 ԵՒ 4, 2027 • ԱՄՐԱԳՐՎԱԾ

Հանրային քննարկում՝ ըստ դպրոցական խմբերի

ԵՐԵԿՈՅԱՆ 6-ԻՑ 8-Ը • ZOOM

Ֆորումները պարզ ներկայացնում են իրավիճակը՝ ներառյալ կարիքների ծավալը հասանելի ռեսուրսների համեմատ, ապա համայնքին քայլ առ քայլ ներկայացնում են նախագծերը: Մարդիկ համեմատում են ներդրումային տարբեր ուղիները՝ օգտագործելով իրենց կողմից ձևակերպված ապագայի պատկերացումը և գնահատելով, թե յուրաքանչյուր տարբերակ ինչ է առաջ տանում, ինչ է հետաձգում կամ ինչ է թողնում դուրս: Մարտի 2՝ տարրական դպրոցներ: Մարտի 3՝ մագնետ, միջին և TK 8 դպրոցներ: Մարտի 4՝ միջնակարգ ավագ դպրոցներ և CIS, PALS, Woodrow-ում մեծահասակների կրթության ծրագիր: Ամսաթվերը պահվում են մինչև PUSD նոր օրացույցի հրապարակումը 2026թ.-ի դեկտեմբերին:

ՄԱՐՏԻ 15, 2027

Հաշվետվություն 3: Առաջնահերթությունների համապատասխանեցումը ծրագրերին

Դպրոցական համայնքի աշխատաժողովներ 02-ի և Համայնքային ֆորում 02-ի արդյունքը, որը ցույց է տալիս համայնքի առաջնահերթությունների և հնարավոր նախագծերի ցանկի կապը: Այստեղ վերջնականացվում են դպրոցական նախագծերը և կազմվում է Առաջնահերթ նախագծերի ցանկի նախագիծը: Ստեղծվում է հստակ հրապարակային արձանագրություն՝ կապելով մարդկանց փորձառությունն ու արժեքները ղեկավարների որոշումների և իրականացման հետ:

ԱՊՐԻԼԻ 7, 2027

SFAC 06: Նախագծի առաջնահերթություն, էջեր 5-6 և վերջնական հաստատում

ԵՐԵԿՈՅԱՆ 5-ԻՑ 7-Ը • ZOOM

Համայնքի կողմից առաջնահերթացված ցանկի և ճշգրտված մեթոդաբանության վերանայում, ապա հանձնաժողովի վերջնական հաստատում: Առաջարկություններն ու գործողությունների հաջորդականությունը փոխանցվում են շրջանի ղեկավարներին և Կրթության խորհրդին՝ պաշտոնական որոշումների համար:

մեկ ուղի, հինգ փուլ

ԱՄԲՈՂՋ ԸՆԹԱՑՔԸ, 2026 Թ. ԱՊՐԻԼԻՑ 2027 Թ. ՄԱՅԻՍ

1	2	3	4	5
ՍԿՍԵԼ ՄԱՐԴԿԱՆՑԻՑ	ՀԱՍԿԱՆԱԼ ՆԵՐԿԱՆ	ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼ ԱՊԱԳԱՆ	ԱՊԱԳԱՅԻ ՁԵՒԱՎՈՐՈՒՄ	ԸՆՏՐԵԼ ՈՒՂԻՆ
2026 ապր., օգոս.	2026 մայ., հոկտ.	2026 սեպտ., դեկտ.	2026 նոյ., 2027 հունվ.	2027 հունվ., մայ.
				ԴՈՒՔ ԱՅՍՏԵՂ ԵՔ

խորհրդի ընդունում

Տարածքների գլխավոր նախագծի Կրթական խորհրդին կներկայացվի 2027թ.-ի մայիսի 27-ին:



ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԳԼԽԱՎՈՐ ԾՐԱԳՐԻ ԹԱՐՄԱՑՈՒՄ • ԻՆՉՊԵՍ Է ԿԱՏԱՐՎՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔԸ

պարզ պատմություն

Դպրոցական շինությունները պատմություն են կրում: Կալիֆոռնիայի ամբողջ տարածքում դպրոցական սահմանների վերաբերյալ որոշումները պարտատոմսային ֆինանսավորման հնարավորությունները և հանրային ներդրումների, սերունդներ շարունակ եղած անհավասարությունը ձևավորել են, թե որ համայնքներն են ստացել ամուր ու երկարաժամկետ դպրոցական շենքեր, իսկ որոնք՝ շարունակ սպասել: PUSD -ը բացահայտ անվանում է այս պատմությունը, որովհետև այն շրջանը, որը հասկանում է թե ինչպես է անհավասարությունը կառուցվել ավելի լավ դիրքում է՝ այլ կերպ կառուցելու համար:

Այդ ըմբռնումը ձևավորում է PUSD -ի ներգրավման մոտեցումը: Խորհրդակցությունը, որը պարզապես հավաքում է նախասիրություններ, բայց որոշումների կայացումը թողնում է անփոփոխ, սովորաբար վերարտադրում է արդեն գոյություն ունեցողը: Փոխարենը շրջանը պարտավորվում է համայնքային գիտելիքը դիտարկել որպես իրական փորձագիտական արժեք, որը պետք է նշանակալի տեղ ունենա վերջնական արդյունքում:

Աշակերտները, ընտանիքները, աշխատակիցներն ու հարևանները նշում են, թե յուրաքանչյուր տարածք ինչ պետք է ապահովի: Պլանավորողներն ու ճարտարապետները այդ ուղղությունը վերածում են ձևի՝ միաժամանակ բաց պահելով իրենց սահմանափակումներն ու փոխզիջումները վերանայման համար: Կարևոր որոշումները վերադառնում են համայնքին, որպեսզի մարդիկ հաստատեն իրենց մտադրությունը տեսնեն՝ ինչն է փոխվել մասնագիտական վերածման ընթացքում և օգնեն որոշել՝ ինչն է պետք առաջ տանել:

1 ՍԿՍԵԼ ՄԱՐԴԿԱՆՑԻՑ

ՔԱՅԼ 1 Առավել ազդեցություն կրած մարդկանց դնել կենտրոնում:

Շրջանն ու ծրագրման թիմը հենց սկզբից պարտավորվում են իրական ազդեցություն տալ այն մարդկանց ովքեր, ապրելու են արդյունքների հետ: Դա ձևավորում է, թե ովքեր են մասնակցում և ինչ գիտելիք է հաշվի առնվում:

Սա հիմք է ստեղծում հետագա բոլոր քայլերի համար:

- SFAC հանդիպում 1

ՔԱՅԼ 2 Նախ սովորել մարդկանցից, հետո ծրագրել:

Ծրագրման թիմը սկսում է հարաբերություններից: Համայնքը ճանաչող մարդիկ բացահայտում են նրա պատմությունը, ուժեղ կողմերը, մտահոգությունները և ուրիշներին հասնելու վստահելի ուղիները:

Ավելի լավ հարաբերությունները բերում են ավելի լավ հարցերի, իսկ ավելի լավ հարցերը՝ ավելի խորքային լսելու հնարավորության:

- Հարցազրույցներ Կրթական խորհրդի անդամների հետ
- Հարցազրույցներ Կրթական շրջանի ղեկավարության թիմի հետ
- Հարցազրույցներ ծրագրման մասնագետների հետ

2 ՀԱՍԿԱՆԱԼ ՆԵՐԿԱՆ

ՔԱՅԼ 3 Լսել առօրյա փորձառությունը:

Աշակերտները, ընտանիքները, մանկավարժները, աշխատակիցներն ու գործընկերները կիսվում են իրական պահերով ու փորձով: Ոչ ոք պարտավոր չէ իր կյանքը մասնագիտական լեզվով ձևակերպել, որպեսզի իր գիտելիքը հաշվի առնվի:

Ապագան սկսվում է ներկայիս իրավիճակի անկեղծ նկարագրությունից:

- Դպրոցական տարածքների հանձնաժողովի հանդիպում և հարցում 1, շարք 1
- Դպրոցական տարածքների հանձնաժողովի հանդիպում և հարցում 1, շարք 2

2 ՀԱՍԿԱՆԱԼ ՆԵՐԿԱՆ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ

ՔԱՅԼ 4 Կառուցել ներկայի ընդհանուր պատկերը:

Բազմաթիվ փորձառություններ միավորվում են, մինչ կարևոր տարբերությունները մնում են տեսանելի՝ լուծման ենթակա մարտահրավերներ, պահպանման արժանի ուժեղ կողմեր և հետապնդման արժանի ձգտումներ: Սա դառնում է Ներկա կրթական միջավայր:

Այն ինչը անձնական կամ մեկուսացված էր թվում, տեսանելի է դառնում ավելի մեծ ամբողջության մեջ:

- SFAC Հանդիպում 2
- Հաշվետվություն 1: Համայնքի առաջնահերթություններ՝ Հոկտեմբերի 19, 2026

3 ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼ ԱՊԱԳԱՆ

ՔԱՅԼ 5 Իմաստավորել և անվանել այն, ինչ կարևոր է

Ընդհանուր պատկերը վերադառնում է համայնքին: Մարդիկ տեսնում են, թե իրենց խոսքերը հանդիպում են իրենցից տարբեր փորձառությունների և նշում ամենակարևոր առաջնահերթությունները:

Մարդիկ պարզապես լսված լինելուց դառնում են ապագայի համահեղինակներ:

- Համայնքային հանդիպում և հարցում 1
- Աշխատաժողով Կրթական խորհրդի հետ
- SFAC Հանդիպում 3

ՔԱՅԼ 6 Սահմանել, թե ինչ պետք է հնարավոր դարձնեն ապագայի դպրոցները:

Մասնակիցները այդ առաջնահերթությունները, կարիքներն ու արժեքները վերածում են Հաջողության պայմանների՝ նկարագրության, թե ինչ պետք է իրականություն դառնա մարդկանց և ծրագրերի հաջողության համար:

Դրանք դառնում են հաջորդ քայլերը ստեղծելու և գնահատելու կողմնացույցը:

- Հաշվետվություն 2: Հաջողության պայմաններ՝ Նոյեմբերի 17, 2026

4 ԱՊԱԳԱՅԻ ՁԵՒԱՎՈՐՈՒՄ

ՔԱՅԼ 7 **Համայնքի ուղղությունը վերածել նախագծային հնարավորությունների:**

Պլանավորողներն ու ճարտարապետները Հաջողության պայմանները համադրում են դպրոցական ծրագրերի, տարածքների կարիքների և ծախսերի հետ՝ ցույց տալով թե յուրաքանչյուր հնարավոր նախագիծ ինչպես է կապվում մարդկանց նշածի հետ:

Մասնագիտական փորձագիտությունը ընդհանուր ուղղությանը տալիս է տեսանելի և գործնական ձև:

ՔԱՅԼ 8 **Ձևավորել և փորձարկել յուրաքանչյուր ապագա դպրոցական տարածք:**

Հնարավոր նախագծերը վերադառնում են յուրաքանչյուր դպրոցական համայնք: Մարդիկ Հաջողության պայմանների միջոցով գնահատում են՝ արդյոք առաջարկները ճիշտ են արտացոլում իրենց մտադրությունն, ապա ուղղում և ձևավորում են դրանք:

Ապագան ձևավորվում է մարդկանց հետ միասին, ոչ թե պարզապես ներկայացվում նրանց:

- Դպրոցական տարածքների հանձնաժողովի հանդիպում և հարցում 2

5 ԸՆՏՐԵԼ ՈՒՂԻՆ

ՔԱՅԼ 9 **Տեսանելի դարձնել իրական ներդրումային ընտրությունը:**

Այն ինչ ցանկանում են համայնքները, կգերազանցի այն ինչ հնարավոր է միանգամից կառուցել: Հստակ սցենարները ցույց են տալիս, թե ինչ կարող է տեղի ունենալ, որտեղ, երբ և ինչ փոխզիջումներով:

Սա կարիքների երկար ցանկը վերածում է իրական ընտրությունների, որոնք մարդիկ կարող են հասկանալ և գնահատել:

- SFAC Հանդիպում 4

ՔԱՅԼ 10 **Դժվար ընտրությունների ժամանակ պահպանել արդարության սկզբունքը:**

Երբ ֆինանսներն ու ժամանակը ստիպում են դժվար ընտրություններ կատարել, բոլորը վերադառնում են Քայլ 1-ում տրված պարտավորությանը և հարցնում՝ ո՞մ կարիքներն են ամենամեծը և ինչից չպետք է զրկված լինի որևէ համայնք:

Այստեղ արդարությունը դառնում է գործելակերպ:

- SFAC Հանդիպում 5

5 ԸՆՏՐԵԼ ՈՒՂԻՆ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ

ՔԱՅԼ 11 **Կշռադատել փոխզիջումները և բացատրել պատճառները:**

Շրջանի տարբեր համայնքների մարդիկ համեմատում են ներդրումային ուղիները՝ օգտագործելով այն ապագայի պատկերացումը, որը իրենք օգնել են ձևակերպել և գնահատելով թե յուրաքանչյուր տարբերակ ինչ է առաջ տանում, ինչ է հետաձգում կամ ինչ է թողնում դուրս:

Համատեղ քննարկումը դժվար ընտրությունները վերածում են կայուն հանրային ուղղորդման:

- Համայնքային հանդիպում 2

ՔԱՅԼ 12 **Առաջնահերթություններից կառուցել նախագծերի ճանապարհը**

Հաջողության պայմանները, դպրոցական նախագծերը, սցենարներն ու համայնքի հիմնավորումները միավորվում են առաջարկությունների և գործողությունների հաջորդականության մեջ, ապա փոխանցվում են շրջանի ղեկավարներին և Կրթական խորհրդին՝ պաշտոնական որոշումների համար:

Արդյունքը հստակ հրապարակային արձանագրություն է, որը կապում է մարդկանց փորձառությունն ու արժեքները, ղեկավարների որոշումների և կառուցվող արդյունքների հետ:

- SFAC Հանդիպում 6
- Հաշվետվություն 3: Առաջնահերթությունների համապատասխանեցումը նախագծերին՝ Մարտի 15, 2027
- Վերջնական ներկայացում Կրթական խորհրդի հետ

ինչ պետք է իմանաք

Ամեն քայլը վերադառնում է մարդկանց: Տեսադաշտից դուրս վերածական ձևակերպում չի կատարվում: Յուրաքանչյուրը վերադառնում է ճանաչման և ուղղման համար:

Երեք զեկույցներ պահպանում են արձանագրությունը: Համայնքի առաջնահերթությունները 2026 թվականի հոկտեմբերին, հաջողության պայմանները 2026 թվականի նոյեմբերին և առաջնահերթությունները նախագծերին համապատասխանեցնելը 2027 թվականի մարտին:

Արդարությունը գործելակերպ է, ոչ թե նախաբան: 1-ին քայլում ստանձնած պարտավորությունն այն է, ինչին վերադառնում է 10-րդ քայլին, երբ ընտրությունները դժվարանում են:

որտեղ եք դուք ներգրավվում

Հինգ հիմնական հանդիպումներ բաց են համայնքի անդամների համար, իսկ երեք հաշվետվություն ամբողջ արձանագրությունը վերադարձնում են ձեզ: Յուրաքանչյուր դպրոցական հանդիպման ամսաթվերը նշված են ներգրավման ժամանակացույցի էջեր 2-4-ում:

ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ՝ ԱՅՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ՈՐՈՆՑ ԴՈՒՔ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՔ

- Դպրոցական տարածքի հանձնաժողովի հանդիպում և հարցում 1, շարք 1
  ՔԱՅԼ 3
- Դպրոցական տարածքի հանձնաժողովի հանդիպում և հարցում 1, շարք 2
  ՔԱՅԼ 3
- Համայնքային հանդիպում և հարցում 1
  ՔԱՅԼ 5
- Դպրոցական տարածքի հանձնաժողովի հանդիպում և հարցում 2
  ՔԱՅԼ 8
- Համայնքային հանդիպում 2
  ՔԱՅԼ 11

Բերեք ձեր ձայնը: Յուրաքանչյուր հանդիպում ներառում է բանավոր թարգմանության և հասանելիության աջակցություն և մասնակցելու համար խրագրման փորձ չի պահանջվում:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ

- Հաշվետվություն 1: Համայնքի առաջնահերթություններ
  ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 19, 2026
- Հաշվետվություն 2: Հաջողության պայմաններ
  ՆՈՅԵՄԲԵՐԻ 17, 2026
- Հաշվետվություն 3: Առաջնահերթությունների համապատասխանեցումը նախագծերին
  ՄԱՐՏԻ 15, 2027

Հասանելի բոլորի համար: Յուրաքանչյուր հաշվետվություն հրապարակվում է շրջանի կայքում՝ անգլերեն, իսպաներեն և հայերեն լեզուներով:

լրացուցիչ տեղեկությունների համար կապվեք RSSC-ի հետ admin@rssconsulting.org